Խաչիկ

Բնակչության թիվը՝ 1002

Խաչիկի համայքի վարչական տարածքը ընդգրկում է Խաչիկ գյուղը: Գտնվում է Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում, Եղեգնաձոր քաղաքից 37կմ հեռավորությամբ դեպի հարավ: Մայրուղուց և մոտակա բնակավայրից՝ Արենիից հեռու է 21 կմ: Երևան քաղաքից հեռավորությունը կազմում է 120 կմ:
Խաչիկ գյուղը գտնվում է Հայոց Լեռների դեպի արևմուտք նայող լանջի վրա: Գյուղից դեպի Շարուրի դաշտը և Արարատ լեռը բացվում է հազվագյուտ գեղեցկությամբ՝ լայնատարած և չքնաղ տեսարան:
Բնակավայրի կենտրոնը գտնվում է ծովի մակերևույթից 1850մ բարձրության վրա: Սահմանակից է՝ հարավից Նախիջևանին՝ 27կմ ընդհանուր պետական սահմանով հյուսիսից՝ Արենի համամնքին 5.94կմ սահմանով, արևելքից՝ Գնիշիկ համայնքին՝ 8.61կմ; Վարչական տարածքի ամենաբարձր լեռնագագաթը <Հարսնասարն> է՝ Ծ.Մ. 2773.4 մ բարձրությամբ, ամենացածր կետը՝ <Ջրաղացներ> Ծ.Մ. 1600 մ բարձրությամբ: 1828 թվականին, երբ Արևելյան Հայաստանը միանում է Ռուսաստանին, տարբեր տեղի հայեր գալիս և բնակվում են Խաչիկում:

Կլիման չոր, կիսանապատային է: Ձմեռը ձյունառատ է և մեղմ, ամառը՝ զով: Տարվա միջին տեղումները՝ 300-400մմ: Քամին՝ հարավային և հարավ-արևմտյան: Բավական մեծ կշիռ է կազմում պարզ և արևոտ օրերի քանակը: Հազվադեպ են մառախլապատ օրերը:

Գյուղում առաջին մարդահամարն անց է կացվել 1831 թվականին, որի արդյունքներով գյուղում հաշվված էր 22 ընտանիք, 101 մարդ, որից՝ 52 կին,
49 տղամարդ: Ընտանիքների թվակազմից 18 -ը բնիկներ են, 4 ընտանիք ներգաղթել է Պարսկաստանից :

2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ մշտական բնակչությունը կազմում է 1022 մարդ, տնտեսությունների թիվը՝ 255:

Տարբեր կազմակերպություններում աշխատում են 119 մարդ:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, բուժկետ, կապի հանգույց, մշակույթի տուն:

Գյուղատնտեսական շրջանառության մեջ գտնվում են շուրջ 600 հա վարելահողեր:

Արոտավայրերը կազմում են 1389 հա, գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերը՝ 4324 հա, բնակավայրի հողերը՝91,5 հա, որից 66 հա բնակելի կառուցապատման հողեր են, անտառային հողերը՝ 156,9 հա:

Հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է: Մշակվում է ցորեն, գարի, հաճար և խաղողի այգիներ՝ 32 հա:

Գյուղի տարածքում հայտնաբերված են կվարցիտային և շինարարական հանքաքարեր, ինչպես նաև բիտումային թերթաքարեր:

Գյուղն ապահովված է խմելու ջրով, գործում են խմելու ջրի երեք հիմնական ջրագծերը և ներքին ցանցը: Օգտագործվում են նաև բնակավայրի ներսում բխող երեք աղբյուրները:

Որպես հեռանկար՝ պատկերվում են զարգացած պտղաբուծությունը, անասնապահությունը, տուրիզմը, հովեկությունը:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խաչիկ գյուղից 4կմ դեպի հյուսիս գտնվում է նշանավոր <Քարկոփ> կամ <Խոտակերաց> վանական համալիրը։ <Քարակոփ> Վանքի հարավային պատի ծավալուն արձանագրությունը վկայում է , որ Վանքը կառուցվել է Սյունյաց Աշոտ իշխանի կողմից, սակայն 9-րդ դարի վերջում տեղի ունեցած ահեղ երկրաշարժի հետևանքով այն քանդվել է, իսկ Աշոտի մահից հետո , նրա կինը՝ Շուշանիկ իշխանուհին, վերականգնել է այն ավելի փառահեղ տեսքով, ի հիշատակ իր ամուսնու։

Վանքի օծման արարողությունը կատարվել է 910 թվականին, որին ներկա են եղել Հայոց Կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին և Սյունյաց Հովհաննես Եպիսկոպոսը։ 1254-1272 թվականներին Քարկոփի վանքը նորոգվում է Սմբատ Օրբելյան իշխանի կողմից, որի մահից հետո, նրա եղբայր Տարսայիճ իշխանը այն ժառանգություն է տալիս իր որդուն՝ պատմագիր Ստեփաննոս Օրբելյան Եպիսկոպոսին։ Վերջինս էլ 1297 թվականին Քարկոփը նվիրում է Նորավանքին։

Վանքից 300մ դեպի հարավ-արևելք գեղատեսիլ գոգավորության մեջ, սառնորակ աղբյուրների հարևանությամբ, 1271 թվականին կանգնեցվել է երկաստիճան պատվանդանով Խաչքար, ի պատիվ Ստեփաննոս Օրբելյանի՝ Խաչիկ գյուղ նրա կատարած այցելության առիթով։

Վանքի շրջակայքում նշմարվում են 10-15րդ դարերի հին բնակատեղիի հետքեր, իսկ մոտակա բլրի վրա, դեպի հյուսիս , կա դամբարանադաշտ։

Գյուղից 500մ հարավ-արևելք գտնվում է Հին գյուղատեղին Խաչիկ գյուղի կենտրոնում գտնվում է Ս.Աստվածածին եկեղեցին, որ կառուցվել է 1681 թվականին, վերակառուցվել՝ 1888 թվականին։

Խաչիկ գյուղում դպրոց հիմնադրվել է 1870 թվականին, Երևանի բնակիչ և Խաչիկում մեծ հողատեր Ստեփանոս Եղիազարյանի հորդորով։ Նույն թվականին կառուցվել է դպրոցի շենքը, որը կարող էր տեղավորել 60 աշակերտ։